

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՄԱՅԱԴՅԱՆ ՎԱՋԵ ՀՈՎԻԿԻ

ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.02. - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝

իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Վահե Վարդանի Ստեփանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Արթուր Գրիշայի Վաղարշյան

իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Վահե Վարուժանի Ռաֆայելյան

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ Սահմանադրական իրավունքի
կենտրոն

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թվականի դեկտեմբերի 18-ին, ժամը 14:30-ին ՀՀ ԲՈՀ-ի՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում գործող իրավագիտության 041 մասնագիտական խորհրդի նիստում (0028, ք. Երևան, Կիևյան 8):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2015 թվականի նոյեմբերի 17-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ա. Հ. Խաչատրյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: ՀՀ արդի սահմանադրական իրավունքի հիմնախնդիրների շարքում առանձնակի կարևորվում են կրոնական կազմակերպությունների սահմանադրաիրավական կարգավիճակին վերաբերող հիմնահարցերը: ՀՀ Սահմանադրությամբ հռչակվող մարդու անձնական (քաղաքացիական) իրավունքների շարքում իր սոցիալ-իրավական նշանակությամբ առանձնանում է խղճի և դավանանքի ազատության իրավունքը և որպես այդ իրավունքի անմիջական իրացման դրսևորում՝ յուրաքանչյուր անձի իրավագործությունը ազատորեն անդամակցել իր նախընտրած կրոնական կազմակերպությանը, օրենսդրության շրջանակներում այլոց հետ միավորվել հոգևոր և դավանաբանական ընդհանրությունների հենքով գործունեություն ծավալող կրոնական խմբերին, մասնակցել պաշտամունքային ծիսակատարություններին և արարողակարգերին, քարոզել իր կրոնական համոզմունքները հավատակիցների շրջանում և այլն: Խղճի և դավանանքի ազատության պատմաիրավական վերլուծությունների հիմքում ընկած է անհատի բարոյական և իրավական ընտրության հիմնախնդիրը: Հիմնախնդրին վերաբերող առաջին իրավական ակտերը վկայում են, որ ի սկզբանե խղճի ազատությունը դիտարկվել է որպես հանդուրժողականության և կրոնի մասին ուսմունքի դրույթների մեկնաբանման ազատություն:

Խղճի և դավանանքի ազատության իրավունքի առկայությունը և իրացումը, կարելի է ասել, վկայում է իրավական, ժողովրդավարական պետության կայացման մասին, որը ենթադրում է խղճի և դավանանքի ազատության ապահովումը մարդու և քաղաքացու համար և նպաստում է հասարակության կրոնաիրավական մակարդակի զարգացմանը:

Ներկայումս հայեցակարգային մոտեցումն այն է, որ մարդու խղճի և դավանանքի ազատության իրավունքն իրագործվում է տարբեր կրոնական կազմակերպություններին և քաղաքացիների խմբերին կամավորության սկզբունքով միավորվելու ձևաչափով, որի հիմքում նախ և առաջ ընկած է յուրաքանչյուր անձի համար նախընտրելի դավանաբանական համոզմունքներն ամրապնդելու և հոգևոր պահանջմունքները միայնակ կամ խմբային բավարարելու ցանկությունը: Հետևաբար կրոնական կազմակերպությունների և քաղաքացիների խմբերի գործունեության նորմավորումը և օրենսդրական դաշտի կատարելագործման խնդիրը, անշուշտ, պետության իրավական քաղաքականության առաջնահերթություններից են: Կասկած չի հարուցում այն, որ կրոնական կազմակերպությունների գործունեությունը և կարգավիճակի առանձնահատկությունները ուղղակիորեն կախված են երկրում իրավակարգի ամրապնդման աստիճանից:

Հայաստանի Հանրապետությունում կրոնական կազմակերպությունների սահմանադրաիրավական կարգավիճակը դեռևս գտնվում է կայացման փուլում: Այդ պատճառով հիմնախնդրի ինստիտուցիոնալ համակարգի գործառության ընդհանուր օրինաչափություններին և առանձնահատկություններին վերաբերող տեսական դրույթների մշակումը արդիական է: Արդիական է նաև

Հայաստանի Հանրապետությունում գործող կրոնական կազմակերպությունների իրավական կարգավիճակի հիմնախնդիրների վերլուծությունը:

Ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը: Անկախությունից հետո հայ իրավագիտության շրջանակներում կրոնական կազմակերպությունների սահմանադրաիրավական կարգավիճակը, ինչպես նաև Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու և պետության միջև փոխհարաբերությունների հիմնախնդիրները դեռևս չեն հետազոտվել: Հարկ է նշել, որ որոշ կրոնագետ հետազոտողներ իրենց աշխատություններում մասնակի անդրադարձել են ատենախոսության մեջ արծարծված առանձին հարցերին: Որպես կանոն, կրոնագետները իրենց ուսումնասիրություններում անդրադարձել են կրոնական խմբերին՝ ընդգծելով նրանց դավանաբանական թյուրմբոնումներն ու գաղափարական հիմնակետերը: Այս իմաստով սույն ատենախոսության մեջ շեշտադրում է կատարվել կրոնական կազմակերպությունների վրա՝ որպես սահմանադրաիրավական ինքնուրույն կառուցակարգ: Մեծարժեք տեղեկություններ են առկա հայ իրավագետներ Գ. Հարությունյանի, Ռ. Ավագյանի, Ռ. Պապայանի, Գ. Սաֆարյանի աշխատություններում:

Ատենախոսությունը եզակի է նրանով, որ հայ իրավագիտության մեջ այն առաջին փորձն է կրոնական կազմակերպությունների սահմանադրաիրավական կարգավիճակի համալիր ուսումնասիրության:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտ են հանդիսացել Հայաստանի Հանրապետությունում խղճի և դավանանքի ազատության իրավունքը, դրա իրացման երաշխիքները և սահմանափակումները, կրոնական կազմակերպությունների գրանցումը, նրանց գործունեության օրենսդրական կարգավորումը, ՀՀ և Հայ առաքելական եկեղեցու փոխհարաբերությունները: Հետազոտության առարկան Հայաստանի Հանրապետությունում կրոնական կազմակերպությունների և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու գործունեության վերաբերյալ գործող իրավակարգավորումներին և դրանց կատարելագործման հնարավոր եղանակներին առնչվող հարցերն են:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը Հայաստանի Հանրապետության կրոնական կազմակերպությունների սահմանադրաիրավական կարգավիճակի համապարփակ վերլուծությունն է: Ատենախոսության նպատակն ենք համարում նաև ներկայացնել կրոնական կազմակերպությունների գործառության համար անհրաժեշտ որակապես նոր վերահսկողական համակարգերի առկայության կարևորությունը:

Այս առումով ատենախոսության խնդիրներն են՝

- համապարփակ ներկայացնել խղճի և դավանանքի ազատության էվոլյուցիան,

- վեր հանել պատմական տարբեր ժամանակաշրջաններում այդ իրավունքի զարգացման գաղափարաբանական, ճանաչողական, արժեքաբանական և տեսական վերաիմաստավորման միտումները և նախադրյալները,

- բացահայտել և համակարգված ներկայացնել միջազգային իրավա-

կան ակտերում և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ խղճի և դավանանքի ազատության իրավունքի ապահովման սահմանադրաիրավական երաշխիքները և դրանց իրագործման առկա կառուցակարգերը,

- ուսումնասիրել ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը և տալ համապատասխան եզրահանգումներ,

- արտասահմանյան երկրներում սույն հիմնահարցի վերաբերյալ գոյություն ունեցող իրավակիրառ պրակտիկայի արդյունքների վերլուծությամբ անդրադառնալ Հայաստանի Հանրապետությունում խղճի և դավանանքի ազատության իրավունքի հնարավոր սահմանափակումների դեպքերում վերջիններիս համաչափության և օրինականությանն առնչվող խնդիրներին,

- վեր հանել կրոնական կազմակերպությունների իրավական կարգավիճակի, այդ թվում՝ գրանցման կարգի, ինչպես նաև նրանց վերապահված գործառույթների վերաբերյալ առկա իրավակարգավորումների առանձնահատկությունները և օրենսդրական բացերը,

- հստակեցնել առանձին իրավական ակտերում ոլորտին վերաբերող ինստիտուտների և հասկացությունների սահմանումները, դրանց առավել բնութագրական հատկանիշների ընդհանրացման միջոցով առաջարկել նոր բնորոշումներ, որոնք հնարավորինս համահունչ կլինեն իրավունքի որոշակիության սկզբունքին,

- վերլուծել պետության և Հայ առաքելական եկեղեցու միջև փոխհարաբերությունների օրենսդրական կարգավորումների առանձնահատկությունները, ցուցանշել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների միջոցով ոլորտում առկա խնդիրներին լուծում տալու հնարավոր ուղիները,

- համակարգել կատարված ուսումնասիրությունների և գիտական վերլուծությունների արդյունքները՝ ներկայացնելով հարցերին առնչակցվող և դրանց լուծմանն ուղղված գիտական եզրահանգումներ:

Հետագոտվել են ոլորտին վերաբերող տեսաիրավական այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են կրոնական կազմակերպությունների իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում, Հայ առաքելական եկեղեցու սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները, ինչպես նաև Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու դավանաբանությունը չընդունող, իբրև աղանդ որակվող կրոնադավանաբանական առանձին հոսանքների տեսակները, ինչպես նաև վերջիններիս գործառույթը Հայաստանի Հանրապետությունում: Այս և այլ հետազոտությունների արդյունքների հիման վրա կատարվել են տեսական եզրահանգումներ:

Հետագոտության մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսության մեջ կատարված հետազոտությունների համար օգտագործվել են գիտական ուսումնասիրությունների հետևյալ մեթոդները՝ դիալեկտիկական մատերիալիզմ, անալիզ, սինթեզ, իրավական համեմատականություն և այլն:

Հետագոտության տեսական հիմքերը: Սույն հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել խղճի և դավանանքի ազատության իրավունքի իրացման երաշխիքներն ամրագրող օրենքները, ինչպես նաև կրոնա-

կան կազմակերպությունների սահմանադրաիրավական կարգավիճակը և պետություն-եկեղեցի հարաբերությունները սահմանող օրենսդրական կարգավորումների վերլուծությանը նվիրված մենագրությունները, ուսումնական դասագրքերը, դոկտորական և թեկնածուական ատենախոսությունները, գիտական հոդվածները և գիտական այլ աշխատություններ: Գործնականում նկատի ունենալով հայ իրավագիտության շրջանակներում այդպիսի աղբյուրների խիստ սղությունը՝ կարելի է հատկապես առանձնացնել Վ. Ենգիբարյանի, Ա. Չախոյանի, Ե. Տեր-Մինասյանի, Ս. Մախլյանի, Վ. Ասցատրյանի, Ա. Ալեքսանյանի, ինչպես նաև օտար հեղինակներից Պ. Դոգորցևի, Վ. Գարաջայի, Ֆ. Ռուդինսկու, Լ. Բատունայի, Ս. Բուրյանովի, Վ. Ներսեսյանցի, Է. Գրիգորյանի, Մ. Կիրիչենկոյի, Ա. Պչեղինցևայի, Տ. Տոմասայի, Ն. Պրիդվորովի, Ե. Տիխոնովայի, Վ. Սավելևի, Բ. Վիշնյակովի, Տ. Միրսկայայի, Վ. Ազևեի, Օ. Շախովի, Բ. Վորոբևի, Ա. Գրիգորենկոյի, Ս. Խասենի, Դ. Էլնազարովի, Ա. Շախոյի, Ս. Ավակյանի, Ջ. Մաք-Դաուելի, Դ. Ստյուարտի և այլոց աշխատությունները: Պետք է ասել, որ ռուս իրավագիտության մեջ այս թեման իր ամենատարբեր կողմերով ուսումնասիրվել է: Դրանով է բացատրվում ատենախոսության մեջ ռուսական աղբյուրների առատությունը և նշված ոլորտում ռուս հետազոտողների կատարած ներդրումը սույն հիմնահարցերի բարձրացման և խորագույն ուսումնասիրության տեսանկյունից:

Հետազոտության իրավական հիմքերը: Ատենախոսության իրավական հիմքն են հանդիսացել ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը, ՀՀ օրենքը «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին», ՀՀ օրենքը «ՀՀ և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին», «Մտադրությունների հուշագիրը Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև», «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը», «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտերը (իրավական դիրքորոշումները խղճի և դավանանքի ազատության սահմանափակումների վերաբերյալ քննված գործերով), «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» կոնվենցիան, «Հանդուրժողականության սկզբունքների մասին» կոնվենցիան, ՌԴ, Հունաստանի և արտասահմանյան այլ երկրների արդի սահմանադրությունները, ԽՍՀՄ և ՀԽՍՀ օրենսդրությունը, այդ թվում՝ սահմանադրությունները, ՌԽՍՀ քրեական օրենսգիրքը, ինչպես նաև հետազոտության առնչվող ներպետական և արտասահմանյան մի շարք այլ իրավական ակտեր:

Հետազոտության գիտական նորությունը: Ատենախոսության շրջանակներում առաջին անգամ միանգամայն նոր ասպեկտներով համալիր հետազոտության նյութ են դարձել կրոնական կազմակերպությունների սահմանադրաիրավական կարգավիճակի հիմունքները Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև խղճի և դավանանքի ազատության իրավունքի ծագման և զարգացման պատմական գործընթացը, այդ իրավունքի իրացման միջազգային և

ներպետական երաշխիքները, սահմանափակումների իրավական հիմքերը և, որ առավել արդիական է, անկախացումից ի վեր Հայաստանի Հանրապետությունում գործող տարբեր կրոնական կազմակերպությունների իրավական կարգավիճակը (իրավատուլյեկտության ծավալը), ինչպես նաև՝ լիազոր մարմինների հետ վերջիններիս հարաբերությունները՝ հիմնվելով ոլորտին վերաբերող սահմանադրական և օրենսդրական կարգավորումների մանրամասն վերլուծության, առանձին պետությունների օրենսդրությունների իրավահամեմատական վերլուծության, դոկտրինալ կարծիքների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների և միջազգային իրավական ակտերի ուսումնասիրության վրա: Մի շարք եզրահանգումներ են արվել «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և ընդհանրապես խղճի և դավանանքի ազատությանն առնչվող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ:

Պաշտպանության ներկայացվող դրույթները: Աշխատանքի կատարման ընթացքում արված վերլուծությունների և հետազոտությունների հիման վրա պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները.

1. Յուրաքանչյուր պետության կարևորագույն գործառնություններից է արդարության ապահովումը սահմանադրության և օրենքների կիրառման միջոցով: Երկրում արդարության առկայության ցուցիչներից է նաև նրա քաղաքացիների խղճի և դավանանքի ազատության իրավունքի իրացումը: Ներկայումս այն մարդու և քաղաքացու իրավունքների ազատության դրսևորման էական հատկորոշիչներից է, ուստի նրա սահմանափակումը ևս պետք է լինի երկկողմանի փոխըմբռնման արդյունք պետության և նրա քաղաքացու միջև: ՀՀ քաղաքացիների խղճի և դավանանքի ազատության իրավունքի սահմանափակումների իրավական ձևերի կատարելագործումը, դրանց կիրառման իրավական հետևանքների մանրամասնեցումը, ՀՀ օրենսդրության մեջ այդ իրավունքի սահմանափակումների եվրոպական չափորոշիչների հստակեցումը կապահովեն նշյալ իրավունքի արդյունավետ իրացումը Հայաստանի Հանրապետությունում՝ չվնասելով երկրի պետական անվտանգությանը և միաժամանակ չխաչընդդեմելով քաղաքացիների խղճի, մտքի և դավանանքի ազատության ապահովմանը:

2. Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու առանձնահատուկ սահմանադրաիրավական կարգավիճակը չի կարող մեկնաբանվել իբրև խղճի և դավանանքի ազատության իրավունքի սահմանափակում, քանի որ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին, ունենալով նաև ազգային ինքնության պահպանման պատմական առաքելություն, ունեցել է էական կորուստներ (եկեղեցապատկան գույքի մի զգալի հատված ռչնչացվել կամ ազգայնացվել է խորհրդային իշխանության շրջանում), կրել է զրկանքներ, որոնց համարժեք փոխհատուցման եղանակներից է, օրինակ, որոշ հարկային արտոնություններ սահմանելը: Ընդ որում՝ «արտոնություններ» եզրույթը խիստ վերապահումներով ենք օգտագործում, քանզի այն տվյալ դեպքում չի համապատասխանում հիշյալ եզրույթի դասական իմաստին, այլ սոսկ փոխհատուցման եղանակ է:

3. Պետություն և եկեղեցի փոխհարաբերության իրավական հիմքերը և

Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու սահմանադրաիրավական կարգավիճակը հանդիսանում են սահմանադրական կարգի հիմունքների ինքնուրույն բաղադրիչներ, ինչից բխում է, որ դրանք մեկ հոդվածում գետեղելն ու ընդհանուր չափանիշներով ամրագրելը բավարար չափով հիմնավորված չէ: Զբացառելով այդ բաղադրիչների առնչությամբ որոշ համընդհանուր հասկանիշների առկայությունը, այնուամենայնիվ, առաջարկվում է հիշյալ երկու բաղադրիչները դիտարկել սահմանադրական կարգի հիմունքների ինքնուրույն տարրեր և կարգավորման առարկա դարձնել առանձին հոդվածներով:

4. Ինչպես «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 2.1 կետում Հայ առաքելական եկեղեցին ճանաչվում է «ազգային» եկեղեցի, այնպես էլ անհրաժեշտություն կա, որ ՀՀ Սահմանադրությամբ նույնպես Հայ առաքելական եկեղեցին ճանաչվի «ազգային» եկեղեցի, որը հնարավորություն կտա վերջինիս ձեռք բերել ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված «ազգային» եկեղեցու կարգավիճակ և չղասվել ընդհանուր իմաստով կրոնական կազմակերպությունների շարքը:

5. Գրականության մեջ տվել են «աղանդի» տարրեր սահմանումներ: Սակայն, հաշվի առնելով, որ դրանք ոչ միայն մասամբ են արտացոլում իրականությունը, այլև տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք են տալիս, ուստի ատենախոսության շրջանակներում մեր կողմից առաջարկվել է «աղանդի» նոր սահմանում:

«Աղանդ» է այն կրոնական խումբը, որտեղ մարդկանց վստահությունը ձեռք բերելով՝ կիրառվում է ատելության և անվստահության սերմանում այլ կրոնական կազմակերպությունների և դրանց ներկայացուցիչների նկատմամբ, հոգեբանական ներազդման ոչ իրավաչափ հնարքներով որոշակի կրոնական ուսմունքի թելադրում, մարդու անհատականության, զգացական ներաշխարհի, վերլուծական ունակության կազմալուծում, մայր եկեղեցու վարդապետությունից շեղում:

6. Հայ իրավագիտության մեջ «հոգեորսությունը» ամբողջապես չի սահմանվել իբրև իրավական եզրույթ:

«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով արգելվում է «հոգեորսությունը» ՀՀ տարածքում, սակայն սահմանված չէ «հոգեորսություն» հասկացությունը, իսկ նույն օրենքի 7-րդ հոդվածում նշվում են այն արարքները, որոնք «հոգեորսություն» չեն համարվում:

Հետևաբար հաշվի առնելով այս հանգամանքը՝ հանդես ենք ելել օրենսդրական այս բացը լրացնելու նախաձեռնությամբ և ատենախոսության մեջ տվել «հոգեորսության» իրավական սահմանումը՝ կրոնական բնույթի քարոզը «հոգեորսությունից» զանազանելու համար:

«Հոգեորսություն» է համարվում այլ կրոնական կամ դավանաբանական պատկանելության հայացքներ ունեցող կամ չունեցող, ինչպես չափահաս, այնպես էլ անչափահաս անձանց նկատմամբ դավանափոխ անելու նպատակով կրոնական բնույթի ցանկացած քարոզչությունը, որը դրսևորվում է՝ անձի վրստահությունը չարաշահելու կամ խաբեության եղանակով կամ կանխատեսված

կերպով մտրոքեցնելով կամ օգտվելով մարդու դավանաբանական անտեղա-
կությունից, սոցիալական, գույքային դրությունից, ատելություն, թշնամանք կամ
անվատահոություն առաջացնելով այլ կրոնական կազմակերպությունների կամ
դրանց ղեկավարների նկատմամբ, ինչպես նաև մարդու նկատմամբ հոգեբա-
նական ներագոման տարբեր ոչ իրավաչափ միջոցներ կիրառելով՝ կրոնական
բնույթի թաուցիկներ, սրբապատկերներ, աստվածաշընչյան բառեր, մտքեր տա-
րածելը, մարդու կամքին հակառակ՝ նրան մոտենալ տանը, աշխատավայրում,
փողոցում և այլ վայրերում:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախո-
սության տեսական նշանակությունն այն է, որ ՀՀ սահմանադրական իրավուն-
քում առաջին անգամ իրավագետների դատին է հանձնվում Հայաստանի
Հանրապետությունում կրոնական կազմակերպությունների
սահմանադրաիրավական կարգավիճակին և նրանց գործունեության
վերլուծությանը նվիրված գիտական աշխատություն, որի շրջանակներում
արված տեսական եզրահանգումները կարող են դառնալ գիտական
բանավեճերի առարկա ու տեսական աղբյուր հանդիսանալ հետագա նմանա-
տիպ աշխատանքների համար:

Գործնական նշանակության առումով՝ ուսումնասիրության արդյունքները
կարող են օգտակար լինել թեմային նվիրված ուսումնական դասընթացների
կազմակերպման, ձեռնարկների տպագրման և հանրային իրազեկվածության
բարձրացմանն ուղղված տարբեր նախաձեռնությունների ընթացքում: Ինչպես
նաև հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել օրենսդրական փո-
փոխությունների նպատակով:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատ-
րաստվել է ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբի-
ոնում: Հետազոտության հիմնական արդյունքները տեղ են գտել հեղինակի գի-
տական հոդվածներում, որոնք հրատարակվել են տարբեր գիտական հանդեսնե-
րում: Ատենախոսության մի շարք դրույթներ հեղինակի կողմից ներկայացվել են
նաև դասախոսությունների և առանձին քննարկումների շրջանակներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներա-
ծությունից, երեք գլուխներից, դրանցում ընդգրկված յոթ ենթազուլիսներից, եզրա-
կացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության և իրավական աղբ-
յուրների ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է հետազոտության թեմայի արդիականու-
թյունը, ներկայացված են ատենախոսության նպատակներն ու խնդիրները, օբ-
յեկտն ու առարկան, գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող
դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, ատենախոսության նոր-
մատիվ, փորձարարական և մեթոդաբանական հիմքերը, ինչպես նաև համառոտ
տեղեկություն ատենախոսության կառուցվածքի մասին:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Խղճի և դավանանքի ազատությունը՝

որպես իրավական պետության սահմանադրական կարգավորման օբյեկտ» վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «Խղճի և դավանանքի ազատության ծագումն ու զարգացումը» վերտառությամբ, հեղինակը ուսումնասիրել է խղճի և դավանանքի ազատության ծագման և զարգացման պատմական փուլերը, որոնք կարևորվում են քաղաքակրթական, փիլիսոփայական, մշակութաբանական, սոցիոլոգիական, կրոնական և հատկապես իրավական տեսանկյուններից: Մասնավորապես նշվում է, որ ըստ ծագման ժամանակաշրջանի՝ խղճի և դավանանքի ազատությունը դասվում է մարդու իրավունքների «առաջին» սերնդի շարքին, որոնք ձևավորվել են բուրժուական հեղափոխությունների ժամանակ և իրացվել որպես «բացասական ազատություն»:

Հատկանշական է, որ այս իրավունքը պատկանում է անձնական իրավունքների և ազատությունների թվին, քանզի այն առավելապես դրսևորվում է մարդու անկախ մտածելակերպի և իր ներքին համոզմունքներով գործելակերպ ընտրելու հնարավորության ձևով՝ ներառյալ ցանկացած կրոն դավանելը, այդ առիթով կարծիք և համոզմունք հայտնելը, ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, ինչպես նաև բոլոր օրինական միջոցներով դրանք տարածելը:

Երկրորդ ենթագլխում՝ «Խղճի և դավանանքի ազատության իրավունքի երաշխիքները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ, ստենախոսի կողմից մատնանշվում են խղճի և դավանանքի ազատության իրավունքը երաշխավորող Հայաստանի Հանրապետության և միջազգային օրենքները, որոնք ապահովում են մարդու մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքի իրացումը:

Սույն ենթագլխի շրջանակներում առանձնակի հետազոտության և քննարկման առարկա են դարձել ինչպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ մասը, որով սահմանվում է. «Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք», այնպես էլ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի 41-րդ հոդվածի 1-ին կետը, որով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք:

Ստենախոսն անդրադարձել է խղճի և դավանանքի ազատության իրավունքի երաշխիքներին, որոնք են՝ ձևական-իրավաբանական և ինստիտուցիոնալ: Այս երաշխիքները ապահովվում են միջազգային և ներպետական իրավական ակտերով և համապատասխան գործառնություններ իրականացնող գերատեսչությունների առկայությամբ:

Երրորդ ենթագլխում՝ «Խղճի և դավանանքի ազատության իրավական սահմանափակումների հիմնահարցը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ, հեղինակի կողմից ուսումնասիրվել են մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքների և ազատությունների սահմանափակումը սահմանող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները, որոնց համաձայն՝ մարդու վերոնշյալ իրավունքների և ազատություն-

ների օրենքով սահմանափակումը թույլատրելի է միայն այն դեպքում, եթե դա համարվում է «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ»: Անդրադարձ է կատարվել նաև ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի 41-րդ հոդվածի 2-րդ կետին, որով մտքի, խղճի և կրոնի ազատության արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Սույն ենթագլխում առանձին քննության են ենթարկվել նաև մարդու այնպիսի իրավունքներ և ազատություններ, որոնք սահմանափակման ենթակա չեն:

Այդպիսիք ընդունված է անվանել բացարձակ կամ հիմնական իրավունքներ, որոնք չեն ստեղծվում պետության կողմից, կարիք չունեն ճանաչվելու և չեն կարող սահմանափակվել կամ ընդհանրապես օտարվել, դրանք բնորոշ են յուրաքանչյուր անհատի և պաշտպանում են ազատությունը ոչ միայն անօրինական, այլև պետության օրինական հարկադրանքից:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Կրոնական կազմակերպությունների իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ ««Կրոնական կազմակերպություն» հասկացությունը և դրա տեսակները» վերտառությամբ, հեղինակի կողմից հետազոտվել են կրոնական կազմակերպությունների տեսակները, և փորձել է արվել տալ «աղանդի» իրավական սահմանումը: «Աղանդ» բառին իրավական սահմանում տալուց հետո միայն հնարավոր կլինի որակել որոշ կրոնական կազմակերպությունների գործողությունները, որոնք մարդու կյանքի և առողջության համար վտանգ են ներկայացնում:

Սույն ենթագլխի շրջանակներում ատենախոսը նշել է, որ աղանդները այն կրոնական կազմակերպություններն են, որ չեն ընդունում Հայ առաքելական եկեղեցու վարդապետությունը, ինչպես նաև ցույց տվել նրանց գործողությունների վտանգավոր ազդեցությունը հասարակության վրա և դրանից ելնելով՝ համապատասխան առաջարկներ արել իրավական դաշտում:

Հեղինակը հանգել է այն տեսակետին, որ կրոնական կազմակերպությունները լինում են երկու տեսակ՝ վտանգավոր (տոտալիտար աղանդներ) և անվտանգ, որոնք միմյանցից տարբերվում են իրենց վարդապետությամբ, մարդկանց իրենց շարքերը համալրելու մեթոդներով, ինչպես նաև հասարակության և պետության մեջ ունեցած դերակատարությամբ:

Սույն ենթագլխի շրջանակներում հեղինակի կողմից ուշադրության է արժանացել նաև ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի 41-րդ հոդվածի 3-րդ կետը, որում սահմանված է. «Յուրաքանչյուր քաղաքացի, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայությունը, ունի օրենքով սահմանված կարգով այն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու իրավունք»:

Երկրորդ ենթագլխում՝ «Կրոնական կազմակերպությունների գործառույթները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ, ատենախոսը սահ-

մանազատում է կրոնական կազմակերպությունների գործառնությունները՝ իբրև օգտակար, մասնակի օգտակար և վնասակար՝ ելնելով նրանց ծավալած գործունեությունից:

Հարկ է նշել, որ կրոնական կազմակերպությունների իրավունքներն ու ազատությունները կարգավորվում և սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նորմերով և «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով: Դրանք սահմանված են նաև ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի 41-րդ հոդվածի 4-րդ կետով:

Համաձայն «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի՝ կրոնական կազմակերպությունները կարող են զբաղվել ինչպես բարեգործությամբ, այնպես էլ կարող են դիմել իրենց հավատացյալներին կամավոր դրամական և այլ նվիրատվությունների խնդրանքով և ստանալ ու տնօրինել դրանք, որոնք հարկման ենթակա չեն:

Ատենախոսքը անդրադարձել է «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքին, որով արգելվում է «ժողովրդությունը», բայց այն չի սահմանվում, հետևաբար հեղինակի կողմից տրվել է «ժողովրդության» իրավական սահմանումը: Այն արժևորվում է այն առումով, որ այդուհետ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները կարող են զանազանել կրոնական կազմակերպությունների կողմից նրանց դավանանքի քարոզչությունը «ժողովրդությունից»:

Սույն ենթագլխի շրջանակներում աստենախոսքը անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի 41-րդ հոդվածի 4-րդ կետին, որի համաձայն՝ կրոնական կազմակերպությունները իրավահավասար են և օժտված են ինքնավարությամբ: Կրոնական կազմակերպությունների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով: Նույն նախագծի 17-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը:

Ատենախոսքի երրորդ գլուխը՝ «Հայ առաքելական եկեղեցու սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները» վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «Հայ առաքելական եկեղեցու իրավական կարգավիճակը XX դարում» վերտառությամբ, հեղինակն ի սկզբանե անդրադարձել է հայ ժողովրդի կյանքում և հատկապես պետականության բացակայության ժամանակ եկեղեցու պատմական դերակատարությանը: Ուսումնասիրվել է Հայ առաքելական եկեղեցու իրավական կարգավիճակը ցարական իշխանության օրոք, Հայաստանի առաջին հանրապետության տարիներին և խորհրդային կարգերի հաստատումից հետո:

Հայտնի փաստ է, որ ցարական իշխանության ժամանակ բռնազրավվել է Հայ առաքելական եկեղեցու գույքը, և փակվել են հազարավոր դպրոցներ:

Ատենախոսքը նկատում է Հայ առաքելական եկեղեցու համեմատաբար «բարվոք» կարգավիճակը Հայաստանի առաջին հանրապետության օրոք: Հեղինակը մեջբերում է 19-ը կետից բաղկացած «Հայաստանյայց առաքելական մայր եկեղեցու և Հայաստանի Հանրապետության միջև նախատեսված դաշնա-

գիրք», որը բավական հաջողված իրավական փաստաթուղթ էր պետության և եկեղեցու փոխհարաբերությունները կարգավորելու առումով:

Ատենախոսք մատնանշում է «Խղճի ազատության» մասին օրենքի առկայությունը խորհրդային տարիներին և դրան հակառակ՝ Հայ առաքելական եկեղեցու և նրա սպասավորների հալածանքն ու հետապնդումը պետության կողմից:

Երկրորդ ենթագլխում՝ «Հայաստանի Հանրապետության և Հայ առաքելական եկեղեցու փոխհարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկությունները» վերառությամբ, հեղինակի կողմից վերլուծության են ենթարկվել պետություն-եկեղեցի փոխհարաբերությունները կարգավորող հետևյալ իրավական ակտերը՝ ՀՀ Սահմանադրության առանձին դրույթներ, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի 18-րդ հոդվածը, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքը, «Հայաստանի Հանրապետության և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև ստադրությունների հուշագիրը», ինչպես նաև առանձին ուսումնասիրման առարկա է դարձել եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների իրավական կարգավորման փորձը մի շարք եվրոպական երկրներում:

Ատենախոսք, անդրադառնալով եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները կարգավորող առկա տարբեր մոդելներին, ուշադրության է արժանացրել ՀՀ Սահմանադրության 8.1. հոդվածը, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատ է պետությունից:

Վերոհիշյալ հոդվածի կրկնությունն է ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի 18-րդ հոդվածը՝ միայն մեկ տարբերությամբ, որ նույն նախագծի 18-րդ հոդվածում բացակայում է եկեղեցին պետությունից անջատ լինելու իրավակարգավորումը, փոխարենը այլ ձևակերպմամբ առկա է նախագծի 17-րդ հոդվածում, որտեղ Հայ առաքելական եկեղեցին դիտարկված է այլ կրոնական կազմակերպությունների համատեքստում:

Եզրակացության մեջ հեղինակն ընդհանրացված կերպով ներկայացրել է հետազոտության կարևոր հետևությունները, մասնավորապես՝

- Խղճի և դավանանքի ազատությունը մարդկային էության անքակտելի իրավունքներից է: Այն անձի հոգևոր ինքնուրույնության և անհատականության դրսևորման չափանիշն է: Ունենալով սեփական համոզմունքները և իր խղճով առաջնորդվելով՝ քաղաքացին ազատ է օրինավոր կերպով ինքնիրացվել տվյալ սոցիալական հանրության:

- Մարդկության պատմության զարգացման ընթացքում բազմաթիվ ձեռքբերումների մեջ առանձնանում է «մարդու իրավունքների և ազատությունների» հայեցակարգը, որի առանցքը հասարակության յուրաքանչյուր անդամի սահմանադրական իրավունքներն ու ազատություններն են, որոնց թվում նաև խղճի և դավանանքի ազատության իրավունքը:

- Մարդու իրավունքների դատական պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքները, այլ իրավունքների թվում, ապահովում են նաև խղճի և դավանանքի ազատության իրավունքի խախտման կամ անօրինական սահմա-

նափակումների դեպքերում անձի նախկին իրավական դրության վերականգնումը արդար դատաքննության միջոցով:

- ՀՀ օրենսդրությամբ ամրագրված խղճի և դավանանքի ազատության իրավունքի ձևական-իրավական երաշխիքներն են՝

- ա) Միջազգային իրավունքի սկզբունքները և այն միջազգային պայմանագրերի (կոնվենցիաների) իրավական նորմերը, որոնց միացել է Հայաստանի Հանրապետությունը,

- բ) ՀՀ Սահմանադրությունը,

- գ) «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև այլ իրավական ակտեր, որոնց կարգավորման բուն առարկան խղճի և դավանանքի ազատությունն ու կրոնական կազմակերպությունների իրավական դրությունն է,

- դ) ՀՀ օրենքներ և այլ իրավական ակտեր, որոնք որոշակիորեն առնչվում են խղճի և դավանանքի ազատությանը և կրոնական կազմակերպությունների գործունեությանը:

- Սահմանափակման ենթակա են դավանանքի կամ համոզմունքների քարոզի և դրանք տարածելու ազատության, կրոնական ծեսերին կամ այլ արարողությունների մասնակցելու իրավունքները, բայց ոչ մտքի, խղճի և կրոնի ազատությունը առհասարակ:

- Ըստ խղճի և դավանանքի ազատության իրավունքի՝ կրոնի նկատմամբ արդի մարդու ունեցած վերաբերմունքն արտահայտվում է եռատարր կառույցի հետևյալ մոդելով՝

- ա) Աստծո գոյությունը հավատալու կամ որևէ կրոն դավանելու իրավունք,

- բ) կրոնի և աթեիզմի նկատմամբ չեզոք (անտարբեր) լինելու իրավունք,

- գ) աթեիստ լինելու և որևէ կրոն չդավանելու, այդ թվում՝ Աստծո գոյությունը ակտիվորեն ժխտելու իրավունք:

- ՀՀ օրենքում ամրագրված դավանանքի ազատությունը ոչ միայն յուրաքանչյուր քաղաքացու հնարավորություն է տալիս ազատորեն ընտրելու ցանկացած կրոնական հայացք, մասնակցելու ծեսերի ու արարողությունների, այլև ենթադրում է օրենքի հիման վրա գործող տարբեր կրոնական կազմակերպությունների ազատ գործունեություն:

- Խղճի և դավանանքի ազատության իրավունքի իրացումը և դրա երաշխիքները յուրաքանչյուր անհատի համար ապահովում են իր հոգևոր-կրոնական պահանջմունքները բավարարելու՝ իրավունքի նորմերով սահմանվող իրավազորությունը:

- Բացի գործող օրենսդրությամբ ամրագրված որոշակի իրավակարգավորումներից՝ մեր երկրում խղճի և դավանանքի ազատության սահմանադրական իրավունքի իրական երաշխավորվածության մասին է վկայում նաև հասարակության մեջ առկա կրոնական հանդուրժողականության վերաբերմունքը տարբեր կրոնական կազմակերպությունների նկատմամբ:

- Մարդու և քաղաքացու սահմանադրական մյուս հիմնարար իրավունքների և ազատությունների նման խղճի և դավանանքի ազատության իրավունքի սահմանափակումները հնարավորինս պիտի համապատասխանեն միջազգա-

յին իրավունքի հանրաճանաչ սկզբունքներով ներկայացվող մի շարք կարևոր պահանջների, այն է՝ իրավական ձևի առումով՝ պարզորոշ, ընկալման համար՝ միակերպ, ժամանակի և տարածության մեջ գործառության առումով՝ խիստ կանխատեսելի և այլն:

- Խղճի և դավանանքի ազատության իրավունքի սահմանափակումների իրավաչափության պայմանների և միջազգայնորեն ընդունված այլ չափորոշիչների հստակեցումը ազգային օրենսդրության մեջ կապահովի այս կարևորագույն իրավունքի արդյունավետ իրացման ներպետական համակարգերի պատշաճ գործառությունը:

- Որոշ կրոնական կազմակերպություններ ապակայունացնում են մարդու գիտակցությունը, քայքայում առողջությունն ու հոգեկան ներաշխարհը, տարանջատվում «ազգային կամ պետական կրոնից ու եկեղեցուց» և հակադրվում նրանց:

- Հայ առաքելական եկեղեցին, ըստ ՀՀ օրենսդրության, նույնպես կրոնական կազմակերպություն է: Այն զբաղվում է կրոնական տեղեկատվության մշակման, ուսուցման, ինչպես նաև հոգևոր, ազգամշակութային արժեքների պահպանման և փոխանցման գործունեությամբ:

- Քանի որ կրոնի կամ համոզմունքի ազատությունը կախված չէ դրա՝ միջազգայնորեն կամ արդի պայմաններում ճանաչված լինելու հանգամանքից, հետևաբար՝ քաղաքացիների խումբը՝ իբրև կրոնական կազմակերպություն, պետք է իրավունք ունենա գրանցվելու նաև այն դեպքում, երբ իր դավանանքը «համաշխարհային ժամանակակից կրոնաեկեղեցական համայնքի» մաս չէ:

- Համապատասխան իրավական ակտի ընդունման պարագայում ՀՀ կառավարության ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի կողմից տարեկան առնվազն մեկ անգամ պաշտոնապես կիրառարակվեն կրոնական կազմակերպությունների մասին տեղեկություններ, մասնավորապես գրանցվող, գործող, լուծարվող և չգրանցված կրոնական խմբերի, նրանց հետևորդների թվաքանակի և գործունեության մասին:

- Աղանդ է այն կրոնական խումբը, որտեղ մարդկանց վստահությունը ձեռք բերելով՝ կիրառվում է ատելության և անվստահության սերմանում այլ կրոնական կազմակերպությունների և դրանց ներկայացուցիչների նկատմամբ, հոգեբանական ներագման ոչ իրավաչափ հնարքներով որոշակի կրոնական ուսմունքի թելադրում, մարդու անհատականության, զգացական ներաշխարհի, վերլուծական ունակության կազմալուծում, մայր եկեղեցու վարդապետությունից շեղում:

- Հայաստանի Հանրապետությունում գործող կրոնական կազմակերպությունների գործունեությունը բնորոշվում է իբրև օգտակար, մասնակի օգտակար և վնասակար: Օգտակար գործառույթ ունի Հայ առաքելական եկեղեցին իր կրթական գործունեությամբ, քրիստոնեական ճշմարիտ արժեհամակարգի տարածմամբ, ամուսնաընտանեկան հարաբերությունների ձևավորմամբ և այլն: Մասնակի օգտակար գործառույթ է կրոնական կազմակերպությունների կողմից բարեգործությամբ զբաղվելը: Վերջինս համարվում է մասնակի օգտակար, քանի որ կարող է հիմք հանդիսա-

նալ հոգեորսության: Վնասակար գործառույթ կարելի է համարել որոշ կրոնական կազմակերպությունների կողմից հոգեորսությամբ զբաղվելը:

- «Հոգեորսություն» է համարվում այլ կրոնական կամ դավանաբանական պատկանելության հայացքներ ունեցող կամ չունեցող, ինչպես չափահաս, այնպես էլ անչափահաս անձանց նկատմամբ դավանափոխ անելու նպատակով կրոնական բնույթի ցանկացած քարոզչությունը, որը դրսևորվում է՝ անձի վստահությունը չարաշահելու կամ խաբեության եղանակով կամ կանխամտածված կերպով մոլորեցնելով կամ օգտվելով մարդու դավանաբանական անտեղյակությունից, սոցիալական, գույքային դրությունից, ատելություն, թշնամանք կամ անվստահություն առաջացնելով այլ կրոնական կազմակերպությունների կամ դրանց ղեկավարների նկատմամբ, ինչպես նաև մարդու նկատմամբ հոգեբանական ներագրման տարբեր ոչ իրավաչափ միջոցներ կիրառելով՝ կրոնական բնույթի թռուցիկներ, սրբապատկերներ և աստվածաշնչյան բառեր, մտքեր տարածելը, մարդու կամքին հակառակ՝ նրան մոտենալ տանը, աշխատավայրում, փողոցում և այլ վայրերում:

- Այն, որ կրոնական կազմակերպությունները իրավունք չունեն զբաղվելու իրենց իսկ կանոնադրությամբ չնախատեսված գործունեությամբ, չի սահմանափակում նրանց կարևորագույն իրավասուբյեկտության ծավալը, քանի որ նրանց կարևորագույն պարտականություններից է հարգել և պահպանել ՀՀ Սահմանադրությունը, օրենքները, ոլորտին վերաբերող միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտեր, ինչպես նաև այլ կրոնական կամ դավանաբանական հայացքների տեր անձանց խղճի, կրոնի, համոզմունքի ազատությունը և այլն:

- Անհրաժեշտ է, որ Հայ առաքելական եկեղեցին դադարի դասվել կրոնական կազմակերպությունների շարքում և համարվի որպես առանձնաշնորհ ունեցող ազգային եկեղեցի: Օրենքի լրացմամբ Հայ առաքելական եկեղեցուն կարող են տրվել մի շարք իրավունքներ՝ ելնելով Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու միջև կնքված հուշագրի պահանջից, քանզի մենաշնորհը ենթադրում է իրավաբանական ուրույն կարգավիճակ: Եվ եզակի լիազորություններ ու գործառույթներ ունեցող ազգային եկեղեցու համար դա պետք է ամրագրել ՀՀ բարձրագույն իրավաբանական փաստաթղթում՝ ՀՀ Սահմանադրության մեջ:

- Հասարակական անվտանգության, ինչպես նաև մարդու խղճի և դավանանքի ազատության ապահովման երաշխիքներից կարող է հանդես գալ ՀՀ կառավարությանն առնթրել կրոնական կազմակերպությունները վերահսկող պետական մարմնի առկայությունը, որը կկանխի «վտանգավոր կրոնական կազմակերպությունների» գործունեությունը: Այն կապահովի նաև կրոնական կազմակերպությունների գործունեության հասանելիությունը ինչպես պետության, հասարակության, այնպես էլ զանգվածային լրատվական միջոցների և այն անձանց համար, որոնք հետաքրքրվում են նրանց գործունեությամբ:

- Հայաստանի Հանրապետությունում կրոնական և աշխարհիկ իշխանությունների հարաբերությունները կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների

մասին» (02.22.2007թ.) ՀՀ օրենքով: Անհրաժեշտ է նշել, որ այս օրենքով Հայ առաքելական եկեղեցուն ամուսնարևտանեկան հարաբերությունների բնագավառում շատ կարևոր գործառույթ է տրված:

Մինչև նշված օրենքի ընդունումը, Հայաստանի Հանրապետությունը ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի ուժով ճանաչում էր միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնությունը: Սակայն «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո Հայաստանի Հանրապետությունը ճանաչեց նաև Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ կանոնական ծեսով իրագործված ամուսնություններն ու հռչակված ամուսնալուծությունները: Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ օրենքի ընդունումից հետո ՀՀ ընտանեկան օրենսգրքում համապատասխան փոփոխություն չի կատարվել, ինչի պատճառով հակասություն է առաջացել ՀՀ ընտանեկան օրենսգրքի և «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի միջև: Այդ պատճառով առաջարկվում է դրույթ մտցնել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասում այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է նաև Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու կանոնական ծեսով իրագործված ամուսնություններն ու հռչակված ամուսնալուծությունները:

- Պետք է արձանագրել, որ գործող Սահմանադրության 8.1 հոդվածում առկա «Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատ է պետությունից» իրավակարգավորումը բացակայում է ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծում, փոխարենը այլ ձևակերպմամբ առկա է նույն նախագծի 17-րդ հոդվածում, որտեղ Հայ առաքելական եկեղեցին դիտարկված է այլ կրոնական կազմակերպությունների համատեքստում:

- Մեր ուսումնասիրության շրջանակներում ուշադրության են արժանացել ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի 41-րդ հոդվածի 3-րդ մասը, որով յուրաքանչյուր քաղաքացի, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայությունը, հնարավորություն է ստանում օրենքով սահմանված կարգով այն փոխարինելու այլընտրանքային ծառայությամբ, և նույն նախագծի 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետը, որով անձը կկարողանա հարկ եղած դեպքում սեփական իրավունքը պետության սպորիինի միջամտությունից պաշտպանել սահմանադրական անհատական զանգատի միջոցով:

- Սույն աշխատության մեջ ներկայացված եզրահանգումների կարևորությունն այն է, որ կրոնական կազմակերպությունների բարեփոխումների օրենսդրական ամրագրումն ու գործնական իրագործումը ավելի արդյունավետ կդարձնեն կրոնական կազմակերպությունների սահմանադրաիրավական ինստիտուտի գործառույթները, կկատարելագործեն վերջինիս կազմակերպիրավական ապահովման բնագավառը, ինչպես նաև կվերացվեն դրանց կարգավորման հարցում առկա բացերն ու հակասությունները: Ուստի անհրաժեշտ ենք համարում նշված օրենսդրական բացերը լրացնել «Միջին ազատության և կրոնական

կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում համապատասխան լրացումների միջոցով:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Կրոնական կազմակերպությունների իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում, «Հանրային կառավարում» գիտական հանդես, ՀՀՊԿԱ, Երևան, № 4/2012, էջեր 149-156:

2. Խղճի ազատության ոլորտը կարգավորող ՀՀ օրենքների շուրջ, «Էջմիածին», պաշտօնական ամսագիր ամենայն հայոց կաթողիկոսութեան մայր աթոռոյ սրբոյ Էջմիածնի, Ս. Էջմիածին, 2013, Գ, էջեր 18-25:

3. Հայաստանի Հանրապետությունում գործող կրոնական կազմակերպությունների իրավական բնութագիրը, «Օրինականություն», № 77, Երևան, 2013, էջեր 58-63:

4. Պետության և կրոնական կազմակերպությունների իրավահարաբերությունները գրանցման հարցում, «Էջմիածին», պաշտօնական ամսագիր ամենայն հայոց կաթողիկոսութեան մայր աթոռոյ սրբոյ Էջմիածնի, Ս. Էջմիածին, 2013, Ը, էջեր 117-127:

5. Հայ առաքելական եկեղեցու իրավական կարգավիճակը 20-րդ դարում, Եվրոպական ակադեմիա, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2014, էջեր 272-285:

6. Խղճի և դավանանքի ազատության իրավական սահմանափակումների հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, «Էջմիածին», պաշտօնական ամսագիր ամենայն հայոց կաթողիկոսութեան մայր աթոռոյ սրբոյ Էջմիածնի, Ս. Էջմիածին, 2015, Զ, էջեր 123-135:

7. Խղճի և դավանանքի ազատության իրավունքի երաշխիքները Հայաստանի Հանրապետությունում, «Էջմիածին», պաշտօնական ամսագիր ամենայն հայոց կաթողիկոսութեան մայր աթոռոյ սրբոյ Էջմիածնի, Ս. Էջմիածին, 2015, Թ, էջեր 126-139:

САДЯН ВАГЕ ОВИКОВИЧ
ПРОБЛЕМЫ КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОГО СТАТУСА
РЕЛИГИОЗНЫХ ОРГАНИЗАЦИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 “Публичное право”

Защита диссертации состоится 18 декабря 2015г., в 14:30 часов на заседании специализированного совета ВАК-а 041 по юриспруденции при Академии государственного управления РА (0028, г. Ереван, ул. Киевяна 8)

РЕЗЮМЕ

Всестороннее изучение конституционно-правового положения религиозных организаций актуально, так как сегодня, в XXI веке, тенденции быстрого развития гражданского общества требуют правовое обоснование при наличии возникающих различных проблем, в том числе, проблем связанных со свободой совести и вероисповедания, гарантий их реализации. Следовательно, рассмотрение религиозных организаций как институциональной системы и непосредственно связанного с ней вопроса права на свободу совести и вероисповедания становится важным в контексте конституционно-правовой концепции Республики Армения.

Правовая регламентация права на свободу совести и вероисповедания, функций религиозных организаций и их деятельности обеспечивается Законом РА “О свободе совести и религиозных организациях”. Исходя, из этого, усовершенствование данного закона и дополнение отмеченных законодательных пробелов будут способствовать правовой защищенности гражданина РА, в вопросе реализации права на свободу совести и вероисповедания.

Диссертация посвящена одной из актуальных проблем юриспруденции – всестороннему анализу проблем конституционно-правового положения религиозных организаций.

В работе посредством сравнительного анализа научно обоснованных взглядов и мнений, были представлены новые теоретические идеи, в частности была сделана: попытка представить новые определения таких понятий, как “секта” и “душеловство”.

С помощью всестороннего изучения различных механизмов правового регулирования обсуждаемой сферы были представлены некоторые недостатки и пробелы функций и деятельности, этих организаций а также соответствующего законодательства РА, посредством сравнительного анализа были выявлены пути и методы их преодоления.

Кроме того, представленном научном труде были по возможности многосторонне проанализированы, исследованы и рассмотрены различные актуальные

проблемы, связанные с конституционно-правовым статусом религиозных организаций, все еще находящихся на фазе становления. В соответствующих разделах диссертации сформулированы некоторые конкретные предложения по усовершенствованию законодательная обсуждаемых сфер.

В первой главе работы была представлена свобода совести и вероисповедания как объект конституционного регулирования, были рассмотрены происхождения свободы совести и вероисповедания, вопросы правовых гарантий и правомерных ограничений этой свободы.

В рамках второй главы работы были представлены некоторые вопросы, относящиеся к правовому положению религиозных организаций, в частности, обсуждались такие вопросы, как “Религиозная организация и ее виды” и “Функции религиозных организаций в РА”.

Третья глава работы полностью посвящена особенностям конституционно-правового статуса Армянской Апостольской Церкви. В ее рамках предметом всестороннего изучения стали некоторые вопросы, относящиеся к правовому статусу Армянской Апостольской Церкви. Вопрос был рассмотрен также в контексте исторических развитий, акцентируя внимание в основном на положение в XX веке. В третьей главе были исследованы особенности правового регулирования взаимоотношений Республики Армения и Армянской Апостольской Церкви, а также правовой статус Армянской Апостольской Церкви до наших дней.

Основные результаты исследования были отражены в научных статьях, а некоторые положения были представлены в рамках лекций и отдельных обсуждений. В то же время автор на основе рассмотрения исторического опыта выдвинул теоретические положения концептуального и практического характера, которые могут быть использованы для усовершенствования и реформирования современной государственно-правовой системы РА.

Необходимо отметить, что все выводы данной диссертационной работы построены на четких историко-правовых и методологических основах.

Исходя из целей исследования, были выдвинуты некоторые актуальные задачи и представлены авторские замечания и необходимые выводы, которые вытекают из логического хода этого исследования и аргументированы надлежащим образом.

Диссертация имеет научно-ориентированное направление и является аналитическим научным исследованием.

VAHE SAYADYAN
THE PROBLEMS OF CONSTITUTIONAL LEGAL CONDITION OF THE RELIGIOUS
ORGANIZATIONS IN THE REPUBLIC OF ARMENIA

Doctoral thesis for Ph.D. in Law on the specialization of 12.00.02 “Public Law”

The defence of the dissertation will be held on 18 december 2015, at 14:30, at the session of the specialized council 041 on Jurisprudence SQC RA at the Public Administration Academy of the RA (0028, Yerevan, Kievyan st. 8)

SUMMARY

A comprehensive study of constitutional legal status of the religious organizations is actual, since today, in the twenty-first century the trends of quick development of civil society require legal justification when encountering various problems, including freedom of conscience and religion, their guaranties and implementation. Thus, the consideration of religious organizations as an institutional system and directly associated with the issue of the right of freedom of conscience and religion becomes important in the context of the constitutional legal concept of the Republic of Armenia.

Legal establishment of the right of freedom of conscience and religion, functions of religious organizations and their activities is defined by the RA Law “On Freedom of conscience and religious organizations”. So, the improvement of the law and efforts to supplement marked legislative disadvantages will promote the legal security of the citizens of the RA in the issues of freedom and realization of the right of freedom of conscience and religion.

The thesis is devoted to one of the actual problems of jurisprudence - the comprehensive treatment of the problems of constitutional legal status of religious organizations.

In the work through a comparative analysis of scientifically-based points of view and opinions are presented new theoretical ideas: in particular, an attempt was made to introduce new definitions of "sectarian" and "soul hunting".

Through a comprehensive study of the legal regulatory mechanisms of the sphere were presented disadvantages of functions and activities, as well as legislation, through the comparative analysis identified the ways and methods of overcoming them.

In the submitted research work were possible fully analyzed, researched in the scientific community and discussed various issues related to the constitutional legal status of religious organizations based on the phase of formation.

In respective parts of the thesis are presented some proposals for the improvement of the sphere.

In the first chapter of the research work the freedom of conscience and religion is presented as an object of constitutional regulation, were discussed the issues of origin,

legal guarantees and restrictions of the freedom of conscience and religion.

In the second chapter of the research work were presented some issues related to the legal status of religious organizations, in particular, discussed the "Religious organization and its types" and "The functions of religious organizations in the Republic of Armenia".

The third chapter is devoted entirely to the work characteristics of constitutional legal status of the Armenian Apostolic Church. Within its framework discussed the subject of a comprehensive study of some issues relating to the legal status of the Armenian Apostolic Church.

The issue was also addressed in the context of historical developments, focusing mainly the situation in the 20th century. In the third chapter were studied peculiarities of legal regulation in relation of the Republic of Armenia and the Armenian Apostolic Church, as well as the legal status of the Armenian Apostolic Church up to the present days.

The main results of the research were published in the scientific articles and some provisions were presented at the lectures and individual discussions. At the same time on the basis of a review of historical experience the author has put forward a theoretical concept and business nature, which can be used to improve and reform the modern state legal system.

It should be noted that all the conclusions of the thesis are built on accurate source of study and methodological foundations.

Based on the objectives of the study are risen some urgent tasks and submitted the author's observations and conclusions, which are derived from the logical progress of the studies and are reasonably explained. The thesis is a research orientated and at the same time has features of analytical scientific work.